



ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՄԱՀՎԱՆ ՈՒԹՕՐԵՔԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 27-ին, կիրակի, Գյուտ հա-
չի տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսա-
վոր սուրբ պատարագ մատուցեց Հյուսի-
սային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի
առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքե-
պիսկոպոս Գալֆայանը՝ ի հանգիստ հոգվո
Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվո ան-
դամ և մեծանուն բանաստեղծ Ավետիք Ի-
սահակյանի:

Սուրբ պատարագին ներկա էին Վեհա-
փառ Հայրապետը, հանգուցյալի սգակեր
ընտանիքը, հարազատները, Գերագույն
Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի
ամբողջ միաբանությունը, մեծանուն բա-
նաստեղծի մտքի և գրչի ընկերները և հա-
վատացյալների մի մեծ բազմություն, որը
եկեղ էր իր վերջին հարգանքը մատուցելու
մեծատաղանդ բանաստեղծի, պատվական
հայ մարդու հիշատակին:

Վեհ ու ներդաշնակ շարունակվում են
սուրբ պատարագի արարողությունն ու եր-
գեցողությունը: Հուզում և վիշտ կա ինչպես
երգի մեջ, այնպես էլ բոլոր՝ դեմքերին և սր-
տերում:

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ
Հայրապետը բարձրանում է Ս. Սեղան: Ամ-
բողջ Տաճարը խոր լուծյան մեջ լսում է
նորին Ս. Օծովյան իմաստաշատ և գեղեց-

կահյուս դամբանական քարոզը: «Ամենայն
մարմին իբրև զխոտ է և ամենայն փառ
մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. խոտն ցամա-
փեցաւ և ծաղիկն թօրափեցաւ. և բան Տեառն
մնայ յաւիտեան» (Ա Պետր. Ա 24—25)
բնաբանով Վեհափառ Հայրապետը խոսում
է կյանքի անցավորության և ունայնության
վրա և վեր է հանում աստվածային հոգու,
ստեղծագործ ոգու դերը անհատի և ժողո-
վրդի կյանքի մեջ: Այնուհետև Վեհափառ
Հայրապետը Իսահակյանին ներկայացնում
է որպես ալդպիսի հոգու տեր մարդու, որը
պիտի ապրի հայ ժողովրդի հետ դարեր և
դարեր, ապա սերունդների համար դառնա-
լով ներշնչման աղբյուր, լուսատու փարոս,
առաջնորդող ոգի և պայքարի դրոշ:

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսա-
դրությամբ կատարվում է պաշտոնական
հոգեհանգիստ: Խնկի անուշ բուրմունքի հետ
վեր, դեպի երկինք է բարձրանում աղոթա-
վորների սրտագին մրմունջը՝ «Գթա, Տէր, ի
հողիս մեր ննջեցելոց»: «Ի վերին Երուսա-
ղէմ» շարականի մեղեդին անսահման մխի-
թարությամբ է լցնում բոլորի վշտահար
սրտերը:

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետի և
Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից Վե-
հարանում տրվում է հոգեհաշ:

